

ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ

Գաղտնիք չէ, որ 21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: Ժամանակակից երեխան ապրում է էլեկտրոնային մշակույթի դարում: Տարրական դպրոցում առանց հասանելի և մատչելի տեսանյութերի դասավանդելը դարձել է անհնար: Առաջ են գալիս մի շարք խնդիրներ՝ որտեղ գտնել նյութը և ինչպես ներկայացնել այն: Այստեղ օգնության են գալիս համակարգիչը և համացանցը: Ավանդական «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» սխեմային ավելանում է մի նոր և խիստ կարևոր օղակ՝ համակարգչային ուսուցում: Հետևաբար անհրաժեշտ է, որ ուսուցիչը տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն՝ լինի մեդիագրագետ:

Տարրական դպրոցի երեխային տրված արդյունքներից մեկը պիտի լինի նաև ժամանակակից համակարգչային տեխնոլոգիայի իմացությունն ու հմտությունը: ՏՀՏ կիրառումը տարրական դպրոցում աշակերտին լայն հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում: ՏՀՏ-ի կիրառումը տարրական

դպրոցում հանգեցնում է բացատրողական-նկարագարող մատուցման փոխարինմանը՝ կիրառականով: Աշակերտը դառնում է ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցը, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական և խորհրդատու, խրախուսում անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը ՏՅՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն: ՏՅՏ-ն տալիս է հնարավորություն արագ կատարել փոփոխություններ ու լրացումներ, պահպանել տեղեկատվությունն ու միաժամանակ հասանելի մնալ, ստեղծել և կիրառել նոր նյութեր: Համակարգչային թեստերի արդյունքում ուսուցիչը կարողանում է արագ գնահատել աշակերտի կողմից ստեղծված նյութերը: Սա հնարավորություն է տալիս առավել պարզորոշ տեսնել յուրացման արդյունքը յուրաքանչյուր աշակերտի, առարկայի, դասարանի կտրվածքով և պատկերացում կազմել կրթական որակի մասին, հնարավորություն է ընձեռնվում ուսուցումը դարձնել մատչելի և հասանելի ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցների համար: ՏՅՏ-ն նպաստում է նյութի յուրացմանը, ամրապնդելու գործընթացին, աշակերտին ներգրավում ուսուցանվող նյութի մեջ: Աշակերտների ներգրավումը հետազոտական գործունեության մեջ նպաստում է խոսքի զարգացմանը, խթանում

ստեղծագործական մտքի դրսևորումը: Ուսուցիչն իր գործունեության ընթացքում դառնում է սովորողի գործընկերը:

Ուսուցման գործընթացում ՏՀՏ կիրառման նպատակն է՝

- Ձևավորել տեղեկատվության հետ աշխատելու ունակություն և իրազեկություն
- Չարգացնել հետազոտական և ստեղծագործական հմտություններ
- Խթանել միտքը
- Սովորողին ակտիվորեն ներգրավել ուսումնական գործընթացի մեջ
- Ապահովել սովորողի և ուսուցչի միջև համագործակցություն ուսումնական գործընթացում:

ՏՀՏ-ի կիրառումը տարրական դպրոցի կրթական գործընթացում նպաստում է տեսական մտածողության զարգացմանը և բարելավում կրթական գործընթացի արդյունավետությունը:

Սակայն ՏՀՏ կիրառությունը դպրոցներում նույնիսկ այսօր առաջ է քաշում մի շարք հրատապ խնդիրներ՝

- համացանցային հասանելիություն դասարաններում
- տեխնիկական հագեցվածություն
- ուսուցիչների համակարգչային հմտություններին տիրապետելը

SՀՏ գործիքները և արդի կրթությունը

SՀՏ-ի սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում նոր պահանջներ է դրել կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում:

SՀՏ-երը դարձել են որակյալ կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք կիրառելի և անհրաժեշտ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալմանը, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու SՀՏ հմտությունների զարգացմանը:

SՀՏ-երը հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ

բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռքբերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ: Ի վերջո ՏՀՏ-երը թույլ են տալիս դասվանդողին ու սովորողին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»:

«ՏՀՏ-ն ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցներին վերափոխել»:¹

www.ex.ac.uk/telematics.T3/corecurr/tteach98.htm

Էլեկտրոնային ուսուցումը կրթական գործընթացի կազմակերպումն է ժամանակակից հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Էլեկտրոնային ուսուցումը կարող է շոշափելիորեն ավելացնել սովորողների գիտելիքները, որի միջոցով մասնակիցները գիտելիք ու գործնական փորձ են ստանում համացանցից:

Էլեկտրոնային ուսուցումը սովորողներին նոր հմտություններ ստանալու, նոր ուղղություններով զարգանալու հնարավորություն է ընձեռնում:

Էլեկտրոնային ուսուցման միջավայրեր ապահովող շատ ծրագրային ապահովումներ կան:

Էլեկտրոնային ուսուցման առավելություններից է՝

- կրթություն ստանալու համեմատաբար ցածր ինքնարժեքը
- Էլեկտրոնային գրականության, առաջադրանքների և այլ նյութերի արագ հասանելիությունը
- ուսուցման մեթոդների ճկունությունը
- նյութերի համատեղ և բազմակի օգտագործումը
- սովորողների մեծ լսարանի հետ աշխատելու առանձնահատկությունը
- դասընթացների մասնակիցների և դասավանդողների աշխարհագրական դիրքից և ժամանակից անկախությունը
- բարդ նյութերի ընկալողունակության բարձրացումը, նրանց սոցիալական հավասարության ապահովությունը

ՏՀՏ-ի ԿԻՐԱՌՈՒ ԹՅՈՒ ՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ Մ

Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլ նաև գիտակից քաղաքացի ձևավորելը, ով կկարողանա հարմարվել և կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Չարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառության այսօր գրեթե անհնար է հասնել այդ նպատակների իրագործմանը: Հայաստանում ևս կրթական գրեթե բոլոր փաստաթղթերում կարևորվում էլ խրախուսվում է ՏՀՏ կիրառությունը ուսումնական պլաններում ամիսը մեկ անգամ նախատեսված են տեխնոլոգիաների ներգրավմամբ դասեր բոլոր առարկաներից, դպրոցների մեծ մասն ունի համակարգչային սենյակ եւ ինտերնետ կապ, ուսուցիչները ժամանակ առ ժամանակ անցնում են համակարգչային հմտությունների վերապատրաստում, մատյանների թղթային տարբերակին փոխարինել է էլեկտրոնային գնահատման համակարգը: Այդուհանդերձ, ուսուցիչների մեծ մասը դժվարությամբ է ընդունում ՏՀՏ կիրառության անհրաժեշտությունը եւ պարզապես կատարում է ԿԳՄՍՆ պահանջները: Ուսուցիչների զգալի մասի համար լրջագույն խնդիր է համակարգչային հմտությունները

զարգացնելը: Էլեկտրոնային նյութեր ստեղծելը եւ կիրառելը համարվում են լրացուցիչ աշխատանք, որի համար իրենք չեն վճարվում: Ուսուցիչների ցածր աշխատավարձը լրջագույն խնդիր է, որ ետ է պահում նրանց լրացուցիչ աշխատանքից, նորարարությունից: Սակայն ուսուցիչը պիտի հասկանա ՏՀՏ կիրառության առավելությունները եւ զգա, թե որքանով է այն հեշտացնում թե՛ իր՝ ուսուցչի գործը եւ թե՛ աշակերտների՝ առարկան հասկանալու, թեմաներն ընկալելու խնդիրը: Բացի այդ՝ անհրաժեշտ են համապատասխան պաշարներ եւ դրանք կիրառելու հմտություններ՝ թեման յուրացնելու և ամրապնդելու գործում:

Հիմնական խնդիրները ուսուցիչների թերի պատրաստվածությունն ու շահագրգռվածության եւ ոգևորության պակասն է. նրանք չգիտեն կամ չեն ցանկանում կիրառել համակարգիչը կամ այլ մեդիա գործիքները կրթության մեջ եւ շահագրգռված չեն դա սովորել: Պետք է նշել, որ ՏՀՏ-ն հիմնականում կիրառվում է հազվադեպ, այն էլ ավելի հաճախ պարտադրված ուսումնական պլանով, եւ դա չի նպաստում կրթության որակի բարձրացմանը: Այս առումով, կարծում եմ, անհրաժեշտ է, որ ուսուցիչն զգա պետության աջակցությունը, որպեսզի ցանկանա ինքնա կրթվել, ցանկություն ունենա ձեռք բերել համապատասխան գիտելիքներ ու հմտություններ :

Առցանց գործիքների կիրառումն այսօր դարձել է կրթության
ամենակարևոր բաղկացուցիչ մասը, սակայն ուսուցիչների զգալի
մասը չունի համակարգչային գիտելիքներ և ուսումնական որևէ նյութ
պատրաստելու համար ստիպված է լինում դիմել այլ անձանց
օգնությանը: Ճիշտ է, պարբերաբար կազմակերպվում են
դասընթացներ, որոնք օգնում են ուսուցիչներին ձեռք բերել որոշակի
գիտելիքներ: Սակայն դասընթացները հազվադեպ են և
վերապատրաստվող ուսուցիչները կազմում են ընդհանուրի շատ
փոքր մասը: Կարծում եմ, այստեղ պետությունը դեռ շատ անելիք ունի:

*Դասավանդողների մասնագիտական զարգացման նպատակով
կազմակերպված ԾԻԳ-ի ՏՀՏ վերապատրաստման
դասընթացները հնարավորություն են տալիս դասավանդողներին ձեռք
բերել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ՏՀՏ գործիքները
ուսումնական գործընթացում արդյունավետ օգտագործելու համար:
Կարծում եմ, նման դասընթացները մեծ արդյունավետություն ունեն ,և
նմանատիպ վերապատրաստումների պետք է մասնակցեն բոլոր
ուսուցիչները:*

Նորարարական տեխնոլոգիաների օգտագոծման միջոցով հնարավոր

է

- ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը՝ զուգորդել ուսուցման ավանդական մեթոդների հետ,
- բարձրացնել սովորողների կողմից ուսուցանվող նյութի յուրացման դյուրինացումը և նրանց մոտիվացիան և առաջադիմությունը
- Ապահովել բոլոր սովորողների համար որակյալ և ժամանակակից կրթություն ստանալու հավասար պայմաններ՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող, գյուղական, սահմանամերձ ու մեկուսացված բնակավայրերի և այլ խոցելի խմբերի երեխաների համար,
- դպրոցական տարիքից սովորողներին ժամանակակից ՏՀՏ-ին հաղորդակից դարձնելը, դրանցով աշխատել սովորեցնելը և տեղեկատվության հասանելիությունն ապահովելը,
- արդի դարաշրջանում խիստ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների զարգացումը սովորողների մոտ,

մասնավորապես՝ ստեղծագործ, քննադատական ու
համակարգված մտածողության, մեդիագրագիտության,
ինքնուրույն սովորելու և հետազոտական աշխատանքներ
կատարելու, համագործակցային աշխատանքի զարգացումը,
• հայալեզու էլեկտրոնային տարատեսակ ռեսուրսների
ստեղծումը և կիրառումը ուսումնական գործընթացում,
• դասավանդողների՝ ՏՀՏ պատրաստվածության, գիտելիքների
և հմտությունների զարգացումը և դասավանդման
գործընթացում ՏՀՏ-ի ակտիվ օգտագործման ապահովումը:

*Կազմակերպվող դասընթացները՝ ուսումնական գործընթացում ՏՀՏ
գործիքների կիրառումը ուսումնառության որակը կբարձրացնեն նոր
մակարդակի՝ ապահովելով բոլոր սովորողների համար տարատեսակ
էլեկտրոնային ռեսուրսների, համակարգչային սարքերի և
համացանցային կապի հավասար մատչելիությունը:*

ԴԱՍԸ ՈՐՊԵՍ ՈՒ ՍՈՒ ՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒ ՅԹ

Դասը ուսումնական աշխատանքի կազմակերպման ձև է, երբ դասընթացներն իրականացվում են դասարանի հետ, հստակ դասացուցակով՝ օգտագործելով սովորողների խմբային ու անհատական աշխատանքը՝ կիրառելով ուսուցման տարբեր մեթոդներ: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Ժամանակակից դասի դիդակտիկ պահանջները.

- դիդակտիկ նպատակի հստակ ձևակերպում
- դասի նպատակներին և ուսումնական ծրագրին համապատասխան դասի լավօրինակ բովանդակության սահմանում՝ հաշվի առնելով սովորողների պատրաստվածության և պատրաստվելու մակարդակները
- սովորողների կողմից գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման կանխատեսում ինչպես դասի, այնպես էլ դասի տարբեր

փուլերի ընթացքում

- դասի յուրաքանչյուր փուլի վրա լավագույնս ազդող դասավանդման առավել ռացիոնալ մեթոդների, հնարների և միջոցների ընտրություն
- դասի գործընթացում սովորողների առավելագույն ինքնուրույնության և դասի ժամանակ անհատական և խմբային աշխատանքների տարբեր ձևերի հետ համադրված ճանաչողական ակտիվության ապահովում
- դասի ժամանակ բոլոր դիդակտիկ սկզբունքների իրագործում
- սովորողների ուսումնառության լավագույն պայմանների ստեղծում:

Դասավանդման մեթոդներն ըստ ուսումնառության գործընթացում սովորողների դերի.

- **Պասիվ.** այստեղ սովորողները հանդիսանում են ուսումնառության «օբյեկտ», որը պետք է յուրացնի և վերարտադրի դասավանդողի փոխանցած նյութը: Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը:

- **Ակտիվ.** Այստեղ սովորողները հանդիսանում են ուսումնառության «սուբյեկտ» և կատարում են ստեղծագործ առաջադրանքներ, դասավանդողի հետ երկխոսության մեջ են մտնում: Հիմնական մեթոդներն են ստեղծագործ առաջադրանքները, հարցերը ուղղված սովորողից դասավանդողին և դասավանդողից՝ սովորողին:
- **Փոխներգործուն.** թույլ են տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին փոխազդել միմյանց վրա: Ընդ որում և՛ սովորողները, և՛ դասավանդողը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ: Դասավանդողը հաճախ ներկայանում է կրթական գործընթացի կազմակերպիչի, խմբի ղեկավարի, սովորողների նախաձեռնությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծողի դերում:

Տեսահոլովակները և սահիկաշարերը ժամանակակից

մանկավարժության

տարրերից են, որոնք օգնում են լսարանում տրված դասընթացը

փոխարինել տեսահոլովակում և սահիկաշարերում տրված նյութերով:

SՀՏ գործիքներով պատրաստված նմանատիպ նյութերի

առկայությունը թույլ է տալիս սովորողին դիտել դասընթացը երբ և

ինչքան կցանկանա, բայց այն նաև պարտադրում է դասավանդողին

մտածել գիտելիքները փոխանցելու նոր գործիքի ստեղծման և
օգտագործման մասին:

Այսօրինակ նյութեր պատրաստելիս անհրաժեշտ է նկատի ունենալ.

- հոլովակը պետք է լինի կարճ
- ցանկալի է, որ առդիո մեկնաբանությունը կատարվի
դասավանդողի ձայնով
- հոլովակը կամ սահիկաշարը պետք է պատրաստել հստակ
պլանով դասի նպատակներից ու խնդիրներից ելնելով
- պատրաստել տեսահոլովակները ոչ ավել քան 6 րոպե
տևողությամբ
- մոնտաժել նյութն այնպես, որպեսզի ժամանակ առ ժամանակ
երևան գա դասընթացավարը
- հոլովակներում ներգրավել շարժական և տեսողական
պատկերներ, որոնք սովորողներին կօգնեն առավել լավ
ընկալել դասանյութը
- հոլովակները նկարահանել աշխատասենյակում, որպեսզի
ստեղծվի առերևույթ դասանցկացնելու պատրանք

Առցանց ՏՀՏ գործիքներ, ուսումնադիդակտիկ էլեկտրոնային
պաշարներ ստեղծելու համար գոյություն ունեն բազմաթիվ
գործիքներ՝ ծրագրային ապահովման, հավելվածային, առցանց

ծառայություններ՝ ստեղծելու

հոլովակներ «շրջված դասարան» մեթոդի կիրառման ժամանակ:

«Շրջված դասարան»-ը մանկավարժական մոտեցում է,

որը փոխում է ուսուցման մեթոդների

ավանդական կազմակերպումը: Սովորաբար տեսական

մասը փոխանցվում է դպրոցի դասարանում՝ ամերես ուսուցման

միջոցով, իսկ գործնական մասը կատարվում է տանը: «Շրջված

դասարան» մեթոդի կիրառման ժամանակ տեսական մասը

կատարվում է տանը՝ լսարանի հետ ավելի

ակտիվ եւ ինտերակտիվ ուսուցման համար հնարավորինս շատ

ժամանակ շահելու նպատակով:

Այս մոդելը հիմնված է տեղեկատվական եւ հաղորդակցության

տեխնոլոգիաների զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում

է «դասարանի շրջումը» եւ առցանց նյութերի հրապարակումը: Առավել

հաճախ այդ նյութերն իրենցից ներկայացնում են փոքր տեսանյութեր,

որոնք դասավանդողներն իրենք են պատրաստում կամ ընտրում են

այլ գործընկերների հետ առցանց փոխանակված նյութերից, իսկ

սովորողները դրանք ուսումնասիրում են ինքնուրույն ամերես

դասընթացից առաջ: Ուսուցումն իրականացվում է դասի ընթացքում

դասավանդողի անհատական օգնությամբ: Այն հնարավորություն է

տալիս ժամանակ խնայել զանազան մանկավարժական
աշխատանքներ իրականացնելու համար:

ԱՌՑԱՆՑ ՏՅՏ ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ՈՒ ՍՈՒ ՄՆԱԴԻՂԱԿՏԻԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների
գործածությունն ուսումնառության ընթացքում նպաստում է
սովորողների մոտիվացիայի աճին: Բացի այն, որ ՏՅՏ-ի
գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու
դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով
նաև կարող ենք ուսումնական գործընթացը դարձնել ինտերակտիվ:
Արդյունքում, սովորողը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացող է, այլ
հենց ինքը կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական
նյութ:

Ուսումնական նյութեր ստեղծելու կամ խմբագրելու համար կան
բազմաթիվ ՏՅՏ առցանց գործիքներ, ինչպես նաև կան
հայալեզու պատրաստի առցանց նյութեր
բնագիտամաթեմատիկական առարկաներից,
օրինակ՝ <http://esource.amedu.am/> կայքում:

ԱՌՑԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒ Մ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՀՏ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գնահատումը ուսուցման գործընթացի վերաբերյալ և նրա կատարելագործման համար փաստեր, հավաստի, բազմակողմանի տվյալներ հավաքագրելու շարունակական գործընթաց է: Այն պետք է խթանի սովորողների և դասավանդողների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը:

Անհրաժեշտ է, որ գնահատումը լինի.

- համապատասխան
- հավաստի
- համարժեք
- կառավարելի
- անկողմնակալ
- արդար
- արժանահավատ
- թափանցիկ

Գնահատում իրականացնելիս հանրակրթական ուսումնական հաստատությունը կարևորում է յուրաքանչյուր սովորողի

Ուսումնառությունը հետազոտությունների միջոցով և հենվում է ուսուցման ընթացքի ու արդյունքների որակի վրա:

Ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է փոխադարձաբար միմյանց միացնող երկու ձևերից՝ ուսուցանող գնահատում և սովորողների առաջադիմության միավորային գնահատում:

Ուսուցանող գնահատման ժամանակ թվանշանային գնահատում չի իրականացվում:

Ուսուցանող գնահատում իրականացնելիս առաջարկվում են աշխատանքների տարբեր տեսակներ.

- կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք,
- խմբային կամ զույգերով առաջադրանք,
- տնային աշխատանք,
- ինքնուրույն կատարման առաջադրանք,
- ինքնագնահատում,
- փոխադարձ գնահատում,
- գործնական աշխատանք

Ուսուցանող կարճատև գնահատումը կարող է իրականացվել գրավոր կամ բանավոր անգամ ՏՀՏ գործիքների միջոցով:

Սովորողների առաջադիմության միավորային գնահատումը նպատակահարմար է իրականացնել գրավոր աշխատանքների ձևով: Այդօրինակ գնահատում իրականացվում է ինչպես ամեն թեմայի վերջում, այնպես էլ դասընթացի ավարտին: Առաջադիմության միավորային գնահատման նպատակը սովորողների ստացած գիտելիքների ու կարողությունների ստուգումն է՝ պարզելու ու գնահատելու համար նրանց առաջադիմությունը: Առաջադիմության միավորային գնահատման ամենատարածված ձևերից է գնահատումն իրականացնել թեստային առաջադրանքների միջոցով:

Առաջին հայացքից թեստային առաջադրանքների կազմումը բավականին դյուրին է, սակայն այն լուրջ մանկավարժական գործընթաց է, որը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

- հետապնդի որոշակի նպատակ
- ունենա տեխնոլոգիական բնույթ(հնարավոր լինի թեստավորում իրականացնել նաև տեխնոլոգիական միջամտությամբ)

Գնահատման հիմանական տեսակների (ուսուցանող և միավորային) իրականացումն ավելի պատկերավոր ու հետաքրքիր կլինի, եթե գնահատում իրականացվի ինտերակտիվ առցանց SՅՏ գործիքների կիրառմամբ:

Գնահատման ժամանակակից մեթոդաբանությունը կիրառելիս հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների առաջադիմության միավորային գնահատում իրականացնելիս նպատակահարմար է օգտվել Բլյումի դասակարգման տաքսոնոմիայից:

Բլյումի տաքսոնոմիան դասակարգում է կրթական նպատակները կամ, ավելի ստույգ, կրթական վերջնարդյունքները:

Տաքսոնոմիայի յուրաքանչյուր մակարդակ կախված է նախորդ մակարդակի ձեռքբերումից:

Այն օգնում է ուսուցիչներին սովորեցնելու, իսկ աշակերտներին՝ սովորելու գործընթացում:

Ուսուցիչը կարող է այս բուրգը կիրառել հետևյալ աշխատանքների կազմակերպման և ուսումնական նպատակների ապահովման համար՝

- Գնահատման իրականացում,
- Դասերի պլանավորում,
- Դասի բարդության գնահատում,
- Թեստերի/հանձնարարությունների բարդության գնահատում,
- Չափորոշիչների կիրառման ուղեցույցների մշակում,
- Առցանց դասընթացների մշակում,

- Սեփական ունակությունների գնահատում,
- Սովորողների՝ չափորոշիչներով նկարագրված ուսումնառական վերջնարդյունքների ապահովում, և այլն:

Առցանց գնահատում իրականացնող իմ աշխատանքներից

Ստորև ներկայացնում եմ առցանց գնահատում իրականացնող իմ պատրաստած մի քանի աշխատանքները.

LearningApps առցանց գործիքի հատկությունները

LearningApps առցանց հարթակը անվճար հավելված է՝ ինտերակտիվ վարժությունների ստեղծման

համար: “LearningApps” հավելվածն օգտագործվում է ուսումնական խաղեր ստեղծելու համար: Այն հնարավորություն է տալիս դասավանդողին իրականացնել ուսուցանող գնահատում:

LearningApps առցանց գործիքը հնարավորություն է տալիս իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ստեղծել առցանց խմբեր (դասարաններ) և տալ համապատասխանաբար առանձին հանձնարարություններ
- ստեղծել առցանց ինտերակտիվ վարժություններ տարբեր թեմաներով և ձևաչափերով վերբեռնելով տարբեր ֆորմատների ֆայլեր

- տարածել ստեղծված առցանց վարժությունները հղման և QR կոդի միջոցով
- հեշտությամբ խմբագրել պատրաստի թեմատիկ վարժությունները
- այս տիրույթում իրականացնել համագործակցություն գործընկերների և սովորողների հետ
- հնարավոր է իրականացնել առցանց քվեարկություններ
- այս տիրույթում կատարել գրառումներ նոթատետրում
- «օրացույց» գործիքը հնարավորություն է տալիս աշխատել այս տիրույթում՝ չգրանցված մարդկանց հետ
- հնարավոր է տարածել հայտարարություններ և կազմակերպել քննարկումներ զրուցարանի (chat) օգնությամբ¹

<https://icttraining.amedu.am/course/view.php?id=217#section-2>

Learning Apps առցանց գործիքով պատրաստված օրինակներ՝

Ա/ Խաղը պահանջում է գտնել ՀՀ մարզերը և մարզկենտրոնների հետ

կազմել զույգեր:


Վերջնարդյունքում աշակերտները

- կճանաչեն ՀՀ մարզերը և մարզկենտրոնները
- կկենտրոնացնեն ուշադրությունը

- կաշխատեն արդյունքի հասնել հնարավոր քիչ քայլերի արդյունքում



Ходы: 0




<https://learningapps.org/display?v=psbq025q320>

Բ/ Ըստ առաջադրանքի՝ խառը թվերից պետք է առանձնացնել զույգ և կենտ թվերը:

Վերջնա րոյունքում աշակերտները՝

կամրապնդեն զույգ և կենտ թվերի մասին ունեցած գիտելիքները



<https://learningapps.org/display?v=puyzaqzk20>

Office sway առցանց գործիքի հատկությունները և գործառույթները

Office Sway առցանց գործիքը նախատեսված է ցուցադրական սահիկաշարեր, թվային հաշվետվություններ և պատմական ակնարկներ ստեղծելու նպատակով:

Office Sway առցանց գործիքը հնարավորություն է տալիս.

- հարթակների հետ համատեղելիություն՝ կարելի է աշխատել Windows 10, IOS , Android համակարգերում
- վեբ բովանդակության ինտեգրում՝ Office Sway գործիքը հատուկ ստեղծված է, որպեսզի նրանում հեշտորեն ինտեգրվեն սլայդներ Twitter, Facebook և Pinterest-ից, ինչպես նաև ներառել մուլտիմեդիա OneDrive, YouTube, SoundCloud, Vine, Vimeo, Flickr, Giphy ամպային և այլ առցանց հարթակներից
- պարզություն, եթե PowerPoint ծրագրով աշխատելիս անհրաժեշտ է որոշակի վարպետություն, ապա Office Sway գործիքում կարելի է առանց հատուկ ջանքեր գործադրելու կողմնորոշվել և ստեղծել հետաքրքիր ու դինամիկ սահիկահանդեսներ
- անվճար հասանելիություն՝ Microsoft տիրույթում հաշիվ ունեցող օգտատերերին

- պատրաստել առցանց «հարստացված հոլովակներ», սահիկաշարեր վերբեռնելով տարբեր ֆայլեր (նկար, տեսահոլովակ, տեքստ) և հղումներ
- արտահանել պատրաստի սահիկաշարը
- հրապարակել հղմամբ և խմբագրել (անգամ այլ օգտատերերի ,ովքեր հեղինակ չեն սակայն ունեն համապատասխան թույլտվություն)²

<https://icttraining.amedu.am/course/view.php?id=217#section-2>

Office Sway առցանց գործիքով պատրաստված օրինակ՝

Նյութը ցուցադրական սահիկաշար է, որը ներկայացնում է

Չայաստանը:



Հայաստան

Հայաստան, պաշտոնական անվանումը՝ **Հայաստանի Հանրապետություն**, պետություն Առաջավոր Ասիայի հյուսիսային մասում՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում: Յրախում սահմանակցում է Վրաստանին, արևելքում՝ Արմենիային, հարավում՝ Իրանին, արևմուտքում՝ Թուրքիային: Հարավարևելյան կողմում Արցախն է, իսկ հարավարևմտյան կողմում՝ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Նախիջևանի ինքնավար Հանրապետությունը: Այժմյան Հայաստանը զբաղեցնում է պատմական Հայաստանի տարածքի միայն մեկ տասներորդը: Նաև «Հայաստան» անվանումը վերաբերում է ողջ Հայկական լեռնաշխարհին, որտեղ կազմավորվել և իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

Հայաստան, պաշտոնական անվանումը՝ **Հայաստանի Հանրապետություն**, պետություն Առաջավոր Ասիայի հյուսիսային մասում՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում: Յրախում սահմանակցում է Վրաստանին, արևելքում՝ Արմենիային, հարավում՝ Իրանին, արևմուտքում՝ Թուրքիային: Հարավարևելյան կողմում Արցախն է, իսկ հարավարևմտյան կողմում՝ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Նախիջևանի ինքնավար Հանրապետությունը: Այժմյան Հայաստանը զբաղեցնում է պատմական Հայաստանի տարածքի միայն մեկ տասներորդը: Նաև «Հայաստան» անվանումը վերաբերում է ողջ Հայկական լեռնաշխարհին, որտեղ կազմավորվել և իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:




ԼՂԻՋԷԼ, քաղաք Հայաստանի արևմտարևմտյան հատվածում է անտառապատ մարզաշրջան ու խոլորանային քաղաքակրթության տիրույթում: Գտնվում է Արմավիրի մարզում: Բնակչությունը՝ 2014 թվականի հունվարի միջին դրությամբ՝ 14,1 հազ. մարդ:



«Կառնի օրվեք խորհրդանշում է հայկական ժողովրդի վերականգնող հարստման, քեփառմանս հայտարարումը: Հայաստանի անկախության և ազատության ու խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամը: Կառնի օրվեք խորհրդանշում է հայ ժողովրդի ազատության և պայծառությանը»



«Կառնի օրվեք խորհրդանշում է հայկական ժողովրդի, հայ ժողովրդի վերականգնող հարստման, քեփառմանս հայտարարումը: Հայաստանի անկախության և ազատության հավատ: Կառնի օրվեք խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամը: Կառնի օրվեք խորհրդանշում է հայ ժողովրդի ազատության և պայծառությանը»





[Հայաստան](#)



Kahoot առցանց գործիքի հատկությունները և գործառույթները

Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է լինեն միասին նույն սենյակում և այս ձևաչափով գնահատման կիրառման ժամանակ անհրաժեշտ է համակարգչին միացված պրոեկտոր և պրոեկցիոն էկրան:

Սովորողները հարցադրումներին հետևելու են էկրանից, իսկ պատասխանները նշելու են

տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ: Հարցման ավարտին հնարավոր

է MS Excel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային

գնահատականները: Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է

սովորողների կատարած առաջադրանքների և արագությունը, և

ճշտությունը: Այս տիրույթում վարժություններ ստեղծելիս հնարավոր է

կազմել հարցադրումներ բազմակի ընտրանք ձևաչափով:

Kahoot առցանց գործիքը հնարավորություն է տալիս հետևյալ իրականացնել աշխատանքները.

- միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ
- պատրաստի վարժությունները խմբագրել. պահպանել առցանց
- հետևել սովորողների առաջադիմությանն առցանց և անմիջապես հարցման ժամանակ
- հարցերի մեջ տեղադրել նկարներ, բանաձևեր
- տարածել պատրաստի վարժությունները
- օգտագործել հավելվածը նաև Skype-ի և Google Hangouts-ի միջոցով
- հարցերն ընտրել ըստ բարդության աստիճանի
- հարցերին ավելացնել նկարագրություն, նկար, տեսահոլովակ
- յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ
- հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը³:


<https://icttraining.amedu.am/course/view.php?id=217#section-2>


Kahoot առցանց գործիքով պատրաստված օրինակ՝

Բաղաձայներ

0 plays · 0 players

Բաղաձայների տարբերակում

 A public kahoot

 **harutyunyanalina1972**
Updated 2 years ago

Questions (3)

1 - Quiz

Նշվածներից գտնել բաղաձայնը

 ա

 բ

 է

 ի

2 - Quiz

Գտնել բառը

3 - Quiz

Գտնել ձայնավորը

<https://create.kahoot.it/share/13883087-0687-4ada-8508-4fc30b2d0149>

Google Forms առցանց գործիքի հատկությունները և գործառույթները

Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա և ոչ համաժամանակյա միավորային գնահատում և տարաբնույթ հարցումներ: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է ունենան համապատասխան հարցման թեստի հղումը: Սովորողները հարցադրումներին

հետևելու են և պատասխանները նշելու են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ: Հարցման ավարտին հնարավոր է MS Excel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականներն ու առաջադիմության ամփոփ վերլուծությունը: Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սովորողների կատարած առաջադրանքների ճշտությունը:

Վարժություններ ստեղծելիս հնարավոր է կազմել հարցադրումներ բազմակի ընտրանք, ճիշտ-սխալ և լրացնել բաց թողնվածը և այլ ձևաչափերով:

Google forms (quizzis) առցանց գործիքը հնարավորություն է տալիս հետևյալ իրականացնել աշխատանքները.

- միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի և ձևաչափերի հարցերից կազմված վարժություններ
- պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց
- հետևել սովորողների առաջադիմությանն առցանց
- տարածել պատրաստի վարժությունները հղումով⁴:

<https://icttraining.armedu.am/course/view.php?id=217#section-2>

Google Forms առցանց գործիքով պատրաստված օրինակ՝



Գոյական, ածական, բայ

Թեմատիկ աշխատանք

[Sign in to Google](#) to save your progress. [Learn more](#)

* Required

Անուն, ազգանուն *

Your answer

Դասարան *

Your answer

Տրված բառերից գտնել գոյականը *

- սիրելի
- սիրել
- սեր

Նշել այն գոյականները, որոնց հոգնակին կազմվում է -եր մասնիկով *

- լիճ
- մեքենա
- գետ
- շենք
- աշակերտ

Ընտրել ճիշտ տարբերակը *

Choose ▼

Կազմել նախադասություն հայրենիք բառով *

Your answer

Կազմել հոմանիշների զույգեր *

	ճաշակել	պերճ	կացարան	ճերմակ	անբիճ
սպիտակ	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>
տուն	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>
մաքուր	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>
համտեսել	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>
շքեղ	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>

Տրված արմատները և ածանցները միացնելով՝ կազմել նոր բառեր *

	ենի	ակ	իկ	անոց
գունդ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
հիվանդ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
ընկույզ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
շուն	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSfGZw6EtIU_YOoMpMdf11OV-3h3rw1fbgNv3wvme9YY8R9AGA/viewform

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ

Այսօր համացանցը բազմաթիվ հնարավորություններ է տալիս դասերն ավելի հետաքրքիր և բազմաբնույթ դարձնելու համար:

ՏՀՏ կիրառությունը դասապրոցեսում՝

- հնարավորություն է տալիս օգտագործել թարմ ինֆորմացիա
- հնարավորություն է տալիս ուսուցչին դասը դարձնել առավել հետաքրքիր և բովանդակալից
- ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պաշար
- բարձրացնում է աշակերտների հետաքրքրվածությունը
- խնայում է ժամանակը

ՏՀՏ հնարավորությունները հետաքրքիր են , բազմազան և անսահմանափակ:Անհրաժեշտ է միայն ցանկություն՝ այդ ամենին տիրապետելու և կիրառելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես
- Համացանց